



«Ներքին աուդիտը բանկերում»

Բանկային վերահսկողության Բազելային կոմիտեի սկզբունքները

ԲՎԲԿ Սկզբունքներ

Ներքին աուդիտի նպատակները

Սկզբունք 1. Արդյունավետ ներքին աուդիտի գործառույթը տրամադրում է անկախ հավաստիացում խորհրդին և կառավարման մարմնին՝ բանկի ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական համակարգերի ու գործընթացների որակի և արդյունավետության վերաբերյալ, դրանով իսկ օգնելով խորհրդին և կառավարման մարմնին պաշտպանել իրենց կազմակերպությունը և կազմակերպության հեղինակությունը:

Անկախությունը և օբյեկտիվությունը

Սկզբունք 2. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը պետք է անկախ լինի աուդիտ անցնող ստորաբաժանման գործունեությունից, որը պահանջում է, որ ներքին աուդիտը ունենա բավարար դիրք և հեղինակություն բանկում, դրանով իսկ հնարավորություն տալով ներքին աուդիտորներին օբյեկտիվորեն իրականացնելու իրենց առաքելությունները:

Մասնագիտական կարողությունները և պատշաճ մասնագիտական վերաբերմունքը

Սկզբունք 3. Մասնագիտական կարողությունները, այդ թվում՝ յուրաքանչյուր ներքին աուդիտորի և բոլոր ներքին աուդիտորների գիտելիքներն ու փորձը համատեղ՝ կարևոր են բանկի ներքին աուդիտի գործառույթի արդյունավետության համար:

Մասնագիտական վարքագիծը

Սկզբունք 4. Ներքին աուդիտորները պետք է գործեն ազնվորեն:

Ներքին աուդիտի կանոնադրությունը

Սկզբունք 5. Յուրաքանչյուր բանկ պետք է ունենա ներքին աուդիտի կանոնադրություն, որը կարտահայտի ներքին աուդիտի գործառույթի նպատակը, դիրքը և հեղինակությունը բանկում՝ նպաստելով արդյունավետ ներքին աուդիտի գործառույթին, ինչպես որ նկարագրված է Սկզբունք 1-ում:

Ներքին աուդիտի ընդհանուր շրջանակը

Սկզբունք 6. Բանկի յուրաքանչյուր գործունեություն (այդ թվում՝ պատվիրակման ծառայությունները) և յուրաքանչյուր անձ պետք է ներառվեն ներքին աուդիտի գործառույթի ընդհանուր շրջանակներում:

Ներքին աուդիտի գործառույթի շրջանակը և վերահսկողություն

Սկզբունք 7. Ներքին աուդիտի գործառույթի գործունեության շրջանակը պետք է ապահովի վերահսկողներին հետաքրքրող հանգամանքների բավարար լուսաբանում աուդիտի պլանի շրջանակներում:

Ներքին աուդիտի գործառույթի շարունակականությունը

Սկզբունք 8. Յուրաքանչյուր բանկ պետք է ունենա ներքին աուդիտի մշտական գործառույթ, որը պետք է ձևավորվի Սկզբունք 14-ի համաձայն, երբ բանկը ներառված է բանկային խմբում կամ գլխավոր ընկերությունում:

Խորհրդի և կառավարման մարմնի պարտականությունները

Սկզբունք 9. Բանկի խորհուրդը² կրում է վերջնական պատասխանատվություն՝ կառավարման մարմնի կողմից համապատասխան, արդյունավետ և նպատակային ներքին հսկողության համակարգի ստեղծման և պահպանման ապահովման համար և, համապատասխանաբար, խորհուրդը պետք է աջակցի ներքին աուդիտի գործառույթին՝ ներքին աուդիտի պարտականությունների արդյունավետ իրականացման գործում:

Աուդիտ կոմիտեի պարտականությունները

Սկզբունք 10. Աուդիտ կոմիտեն կամ նրան համարժեք այլ մարմին պետք է վերահսկի բանկի ներքին աուդիտի գործառույթը:

Ներքին աուդիտի ստորաբաժանման կառավարումը

Սկզբունք 11. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է պատասխանատու լինի ստորաբաժանման գործունեության՝ ներքին աուդիտի ստանդարտների և համապատասխան վարքագծի կանոնների համաձայն իրականացման ապահովման համար:

Ներքին աուդիտի գործառույթի հաշվետվողականությունը

Սկզբունք 12. Ներքին աուդիտի ստորաբաժանումը պետք է հաշվետու լինի խորհրդին կամ աուդիտ կոմիտեին ներքին աուդիտի կանոնադրությունում նկարագրված լիազորությունների իրականացման վերաբերյալ բոլոր հարցերի հետ կապված:

Ներքին աուդիտի, համապատասխանության և ռիսկերի կառավարման գործառույթների կապը

Սկզբունք 13. Ներքին աուդիտի գործառույթը պետք է իրականացնի բիզնես միավորների և օժանդակող գործառույթների կողմից ստեղծված ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական համակարգերի ու գործընթացների արդյունավետության և նպատակայնության անկախ գնահատում և տրամադրի հավաստիացում այս համակարգերի և գործընթացների գծով:

Ներքին աուդիտը բանկային խմբի կամ գլխավոր ընկերության կառուցվածքում

Սկզբունք 14. Բանկային համակարգում ներառված բոլոր բանկերի ներքին աուդիտի հետևողական մոտեցմանն օժանդակության համար բանկային խմբի կամ գլխավոր ընկերության կառուցվածքում ներառված յուրաքանչյուր բանկի խորհուրդը պետք է ապահովի հետևյալ պայմաններից որևէ մեկը.

- ✓ Բանկն ունի իր սեփական ներքին աուդիտի գործառույթը, որը պետք է հաշվետու լինի բանկի խորհրդին և պետք է զեկուցի բանկային խմբի կամ գլխավոր ընկերության ներքին աուդիտի ղեկավարին;

Բանկային խմբի կամ գլխավոր ընկերության ներքին աուդիտի գործառույթը իրականացնում է բավարար շրջանակով ներքին աուդիտի գործունեություն բանկում, որը հնարավորություն է տալիս խորհրդին բավարարել իր ֆիդուցիար և իրավական պարտավորությունները:

Ներքին աուդիտի ծառայությունների պատվիրակումը

Սկզբունք 15. Անկախ նրանից, որ ներքին աուդիտի գործունեությունը պատվիրակված է, խորհուրդն է մնում վերջնական պատասխանատուն ներքին աուդիտի գործառույթի համար:

Հաղորդակցությունը՝ վերահսկողական մարմնի և Ներքին աուդիտի միջև

Սկզբունք 16. Վերահսկողները պետք է ունենան կանոնավոր հաղորդակցություն բանկի ներքին աուդիտորների հետ՝ երկու կողմերի կողմից հայտնաբերված ռիսկային ոլորտների քննարկման, բանկի կողմից ձեռնարկված ռիսկերի նվազեցման միջոցառումները հասկանալու և բացահայտված թերությունների վերաբերյալ բանկի արձագանքը վերահսկելու համար:

Ներքին աուդիտի գործառույթի գնահատումը

Սկզբունք 17. Բանկային վերահսկողները պետք է պարբերաբար գնահատեն, թե արդյոք ներքին աուդիտի գործառույթը բանկում ունի բավարար դիրք ու հեղինակություն և գործում է սկզբունքներին համապատասխան:

Վերահսկողական մարմնի կողմից ձեռնարկված գործողությունները

Սկզբունք 18. Վերահսկողները պետք է պաշտոնապես զեկուցեն խորհրդին ներքին աուդիտի գործառույթում իրենց կողմից հայտնաբերված բոլոր թերությունները և պահանջեն շտկիչ գործողություններ:

Վերահսկողական մարմնի գնահատականը ռիսկերի վերաբերյալ

Սկզբունք 19. Վերահսկողական մարմինը պետք է հաշվի առնի իր կողմից ներքին աուդիտի գործառույթի գնահատման ազդեցությունը բանկի ռիսկերի նկարագրի և իր սեփական վերահսկողության աշխատանքի գնահատման ժամանակ:

Վերահսկողական մարմինը և շտկող գործողությունները

Սկզբունք 20. Վերահսկողական մարմինը պետք է պատրաստ լինի ձեռնարկելու ֆորմալ և ոչ ֆորմալ վերահսկողության գործողություններ՝ պահանջելով խորհրդից և կառավարման մարմնից շտկել ներքին աուդիտի գործառույթին վերաբերող հայտնաբերված ցանկացած թերություն սահմանված ժամկտներում և պարբերաբար ներկայացնել գրավոր առաջխաղացման հաշվետվություններ վերահսկողին:
